## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 093383347 noramarg.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 9

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021թ ՄԱՅԻՍԻ 25 -Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով.**ավագանին որոշում է՝**

Հաստատել Նորամարգ համայնքի ավագանու թիվ 3 նիստի օրակարգը.

1.ՀՀ Նորամարգ համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտիավորման նախագիծը) համաձայն հավելվածի.

2.Բյուջեում փոփոխություն կատարելու մասին

3.Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին

4.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

5.Նորամարգ համայնքի բնակիչ Արամ Հարությունյանի բնակավայրեր ,բնակելի կառուցապատման հողամասի սեփականության վկայականում հին հասցեն վերահասցեավորելու մասին.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԳԱՋԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՀՈՎՅԵՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱԼԻՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ... *03801391*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 093383347 noramarg.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 10-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 31.03.2021թ. թիվ 2-3 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Նորամարգ համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման նախագիծը) համաձայն հավելվածի:

2.Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններ (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)» գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳԱԳԻԿ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ
ԳԱՋԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ
ՀՈՎԵՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՔԱԼԻՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 093383347 noramarg.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 11-Ն

### ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՞Տեղական ինքնակառավարման մասին՞ Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշում է՝

1.Հաստատել Նորամարգ համայնքի 2021 թվականի Վարչական և ֆոնդային բյուջեի եկամտային և ծախսային մասերի փոփոխությունները՝
*2021 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 1-6-1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հատվածի 4841 հոդվածը պակասացնել 150.0 հազար դրամով.
*2021 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 1-6-1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հատվածի 4241 հոդվածը ավելացնել 150.0 հազար դրամով՝ Նորամարգ համայնքի 1996թ-ից մինչև 2015թ ներառյալ արխիվացման ենթակա փաստաթղթերը հանձնել պետության Հայաստանի ազգային արխիվին,որպես սեփականություն.
*2021 թվականի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 4-3-2 հատվածի բնական գազի 5112 հոդվածը պակասացնել 5000.0 հազար դրամով.
*2021 թվականի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 4-3-2 հատվածի բնական գազի 5134 հոդվածը պակասացնել 550.0 հազար դրամով.
*2021 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 1-6-1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հատվածի 5112 հոդվածը ավելացնել 5000.0 հազար դրամով՝ Նորամարգ համայնքի մանկապարտեզի տարածքում արևային ֆոտովոլտային համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով.
*2021 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 1-6-1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հատվածի 5134 հոդվածը ավելացնել 550.0 հազար դրամով՝ Նորամարգ համայնքի մանկապարտեզի տարածքում արևային ֆոտովոլտային համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձագիտական եզրակացության խորհրդատվական աշխատանքների ձեռքբերման նպատակով.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳԱԳԻԿ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ
ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ
ՀՈՎԵՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՔԱԼԻՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 093383347 noramarg.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

25 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 12

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ՜Հողային օրենսգրքի՜ 7-րդ հոդվածի 8-րդ մասով և հիմք ընդունելով քաղաքացի Հայկուհի Մնացականի Հակոբյանի դիմումը.

ավագանին որոշում է

1.Սեփականության իրավունքով Հայկուհի Հակոբյանին պատկանող 03-068-0346-0002 կադաստրային ծածկագրով 0,65 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակության փոփոխել և դասել արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությանը, ձկնաբուծական արհեստական լճակներ կառուցելու նպատակով:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՀՈՎԵՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱԼԻՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 093383347 noramarg.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 13

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1918-Ն որոշմամբհաստատվածկարգի 17-րդ կետխիհիմքընդունելովՀայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 12.05.2021թ N 108 դրական եզրակացությունը.

ԱՎԱԳԱՆԻ

Ն ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Արարատի մարզիՆորամարգ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման, ըստ որի համայնքային սեփականություն հանդիսացող կադաստրային 03-068-0662-0001 ծածկագրի տակ գտնվող 0.0455 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքին պատակային նշանակությունը
փոխադրել ջրային հողերի կատեգորիա ջրային օբյեկտների հողերի գործառնական նշանակության դասին :

2.Թույլատրել համայնքի ղեկավարին 0.0455 հա ջրային նպատակային նշանակության հողամասում առկա ինքնակամ կառույցները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օրինականացնել:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՀՈՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱԼԻՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար` ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 093383347 noramarg.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 14

### ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՒՄ ՀԻՆ ՀԱՍՑԵՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 29.12. 2015 թվականի N2387-Ն որոշման և 55-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Նորամարգ համայնքում Արամ Հարությունյանի սեփականության իրավունքով պատկանող 03-068--105-006 կադաստրային համարի տակ գտնվող 7-րդ փողոց-42 հասցեն վերահասցեավորել Նորամարգ 5-րդ փողոց-12 :

2.Արամ Հարությանյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասի հին 7-րդ փողոց- 42 հասցեն համարել չեղյալ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՀՈՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱԼԻՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ